

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղաբացիք զիմում են ուղղակի
 Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն ժամ:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր քառին 2 կոպէկ:

UCL

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Ղլաբից
Նամակ Բաղուից: Նամակ Խմբապրին: Նամակ
Խմբապրին: Նամակ Խմբապրին: Ներքին լուրեր:—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Գերմանիա: Եկպատոս
Նամակ Թուրքիայից: Արտաքին լուրեր:—ԽԱՌՆ
ԼՈՒՆԵՐ:—ՀՆԵԱՍՔԻՆՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ:
ՆԵՐ:

ՆԵՐՔԻՆՆ ՏԵՄԵՐԹԻՆՆ

ՆԱԽԱԿ ԴԶԼԱԲԻՅ

Յուզնիսի 12-ին

Ներքերումս «Մեղուի» վերջին համայնքներից մեկում ապած էր Ղզլարից մի նամակ՝ «Քարեկամ» ատորապլուծեմամբ: Ահա այս բարեկամիս կամե-նում եմ մի քանի խօսք ասել, որովհետև նա հեր-բուս է իմ յայտնած լուրը Ղզլարի տկարիթիվը: Ներկի մայրն և որդա համար առաջ է բերում, ինչպես ինքը ասում է, ծանրակշիւ փառտեր և իմ կարծիքը վրա ծաղղեւոյ, կոչում է ամբոթի կարծիք, մուսնալոյ առածը, թէ ձայն ամբոթի է ձայն Աստուծոյ: Բայց և ուզում եմ նորա սիրտը շահել և մէջ բերել, ինչպէս փաստ, մասնապէս շահի կարծիքը:

Բարեկամման, ինչպես երևում է, չառ բան յայտ-
նի է, միայն յայտնի է, որ նորերում քաղաքը
լին հլուում երկար վիճարանությունից յես մի
բժիկի քիչ է մնացել, որ չիշով միւս բժշկի հլու-
իւր ջանքանիւր, և գիտես, բարեկամ, ինչու ճա-
նար. հնչե նորս ամառի որ ճառատաւ, Ղլլարի
տակարարությունների համակրի, յատկութիւնը:

Բարեկամն մեզ շատ է զարմացնում, որ իր ընթացման մասնագետներին կարծիքները չափում մասնագետ է մեջ է ընդունել և այս վերադարձով փաստել: Իսկ ինչ կը վերադարձին նորան, որ նա ասում է թե՛ սուտ է այն տուրքը, որ մեղադրում 9000 բնակիչ կայ, այլ հետադուր մշակվող շատ էին է, մենք կանանք որ մեր բարեկամը ինքը կամ կորցրել է սուտը ուղիղից որդաչուս ընդունակությունը, և կամ իրան աշխատել է ձեռք տալիս. մեր ասած 500 մուսած մարդիկ ցուցակը մենք վերցրել ենք միայն Ղվարարի բնիկ բնակիչներին մեղադրողներ թիվը, և ինչ վրդաբարոսներին է հարկվաւոր այստեղ:

Մեր բարեկամը մինչև անգամ ցառում է մեր
լրագիրները պատել մասին, որ սուտ թղթակցու-
թյուններ են տպվում այնտեղ: Ինչ արած. վաղուց
է արդեն մեր լրագրութիւնը իր պատիւը չէր ճա-
նաչում: Հարցրե՞ք պ. Երիցեանից, նա ձեզ կը
պատմէ, որ մի պարտն կար, որը «Հիւսիսափայլ»
մէջ 60 թուականներին սխալմամբ մի յայտնի ուսու-
նէդիտակի գրութեան թարգմանութիւնը իր սեղ-
ճական հեղինակութիւնն տեղ երկար ու ձկն նա-
սեմով նուիրելու հանգուցանել Նալբանդեանին:
Եւ այժմ մամուլի պաշտպան են դարձել:

Բարեկամ, զոնե ալիմ մի փոքր աղյուս վար-
վենք մամուլի հետ: Ինչ հարկաւոր է իդուր տեղը
չիպէլի նորանց, ովքեր միայն փաստերի հետ
բորձ ունեն, և ոչ իմէ յեկարանութեան:

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Յուշիփաթ 12-ին

Այսին 2-ին առաւօտեան ժամը 10-ին Նորէլ Քաճառատան «Նորդինչիլդ» անուամբ շոգհաւում պատահեց հրդէհ: Հրդէհը սկսած էր շոգհաւակ խոհանոցից, անմիջապէս այրելով ամբողջ շոգհաւը, որ բարձած էր 1,000 պոլոց կերօսիւով, և այն նաւամատուցի կէս մասը, որի մօտ կանգնած էր շոգհաւը: Այրվեցան շոգհաւաւում մի բուֆետէլէ իրեն մօտ ծառայող 14 ասարեկում մի տղայի հետ, և երկու մարտաշարներ, որոնցից

միլիւր հէնց նոյն օրը մտած է եղել այդ չղոցնաւոր ծառայութեան: Նաեւ մի նաւաստի ահից դցում է իրեն ծովը և անյայտանում: Կան դարձեալ մի քանի վնասվածներ: «Նորդին» չլիւր: մօտ լինում են հրդեհի ժամանակ Նօթէլ մի չղոցնաւոր և մի առաքանաւոր մեծ նաւ, առաջինը բարձած է լինում 40,000 պուլը կերպիւմով: Երկուսը եւս յաջողութեամբ ծովն են փախչում: Արված չղոցնաւոր արժէքը 100,000 ռուբլ, իսկ նաւամատոյցը նորէն պատրաստելու համար հարկաւոր է 10 հազարից մինչև 12 հազար ռուբլ: Մի և նոյն օրը կէսօրից յետոյ նոյն ֆիւմայէն պատահում է մի ուրիշ դժբաղդութիւն. մի ահալին պահեստ կողբերից ցրիւ գալով ահալին քանակութեամբ նաւթ տարածում է ահալին տեղ չըջալպակելով, և մի քանի գործարաններ, որոնք իսկովի կանկներ հանլցնում և դաղարեցնում են մինչև այսօր դեռ նրանցից ոչ մէկը չէ գործում և իւրաքանչիւրը նրանցից օրեկան 200 ռուբլ վնաս է ստանում: Նօթէլ անմիջապէս ահալին նստօտներ է դնել տուել և այդ գոյացած լճերից թափված նաւթը յետ է քաշում: Մի փոքրիկ կրակ դիպելուն պէս սարսափելի վնաս էր սպառում չաւերին: Մինչև այժմ էլ պահանջանքներ կան իւրացած:

Յարիցինից առաջած անդևկուժեան նայելով,
կերօսինը պուզում 25 կօպէկ աւելացել է վերջին
պատահմունքների պատճառով:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Բաղու, 12 յունիսի

Չեր պատուական լրագրի 95 համարում պ. Ս. Թառապեանց մի քանի տեղեկութիւններ հաղորդելով Բաղրի հայ աւետարանականների ուսումնարանի վերաբերեալեկանի, բողոքում է որ այդ ուսումնարանում հայ երեխաների դատարանաբաշխեան վրա բոլորում են ուշադրութիւն չէ արձալում է յարձակվելով հայ ուսուցչի աստուծոյն վրա, խորհուրդ է տալիս մեզ, հայ աւետարանականներին, կրկին հրաւրել ուսուցչի պաշտօնը կատարելու, երիտ տարի սրանից առաջ արձակած չէ. Համարածուսանին, որի «պայմանները լաւ են եղանակի և յարմարաւոր են մեր զարթոյն համար»:

Ամենայն մի բողոք, որքան որ իր սկզբնաւորութենով արդար և ճշմարիտ լինի, եթէ նա առանց խորհելու և մտածելու է յայանվում, եթէ նա իր մէջ պարունակում է անճանկան նեղ չափեր պաշտպանելու նշաններ, նա կորցնում է իր ճշմարտական քնաւորութիւնը: Այս դատակարգի հազարից իւր կարելի է վերադրել և պ. Ս. Թառաւմանցի բողոքը:

խնայելու ամենայն մի ապագային հինարվելովիւն,
տնայելու և ուսումնարանը առաջադիմութեան
առաջը վրա կանգնեցնելու համար, բացի նրա զե-
կապարներէի բարոյական ջանքից և աշխատանքից
հարկաւոր են և նիւթական միջոցներ, հարկաւոր
էի ող և ելթէ այս վերջինը չը կայ կամ ելթէ
այս ոչ բուսականաչափ, այն ժամանակ հազար
տեսակ աշխատող, չարչարվիր և թէ կող անձ-
նազոհութիւն զործիր, բոլոր անօգուտ և ապար-
հաւոր են մնալ: Ան Երեսնամեակն անհաշիւ

Երբ զը տեսնէ՝ Պ. Ս. Բախտեմաճյանը անշուշտ
պայտել է, որ այն ընկերութիւնը, որ պահում է
ապրիլ տատմամբները, ունի տարեկան մէ չնչին և-
սամուռա. այն է 1000 ռուբլի։ Երբ այդ գումարից
300 ր. քործադրվում է աղքատ ընտանիքների գո-
տութիւնը լիկիւնացնելու համար, իսկ մնացեալ
700 ռուբլի յանձնվում է ուսումնարանի հոգա-
նարարութեան որպէս զի վերջինը այդ գումարից
150 ռուբլի թէ պատարի առճիւ մի յայտնի մար և
մէ ուսումնարանի բնակարանի վարձը,—այնու-
հետև հասկնալի է թէ որպիսի չնչին գումար
հասնում հայ ուսուցչի վարձատրութեան համար, մի
որով հազիւ թէ նոյն իսկ ամենահան-
աքարից է ամենամաքայիկ հոգարարութիւնը կա-
ռուց լինի ուսումնարանին որ և իցէ առաջադի-

մոլիժին անել տալ: Միտմ է ուրեմն բռնակա-
նանալ առ ժամանակ չզղլոցի չորրորդ դասա-
տանից կիսատ դուրս եկած, հայերէն միայն գրել
չլիլ իմացող՝ ուսուցչով: Լաւ ուսումնարանն և
հետեալքար լաւ ուսուցիչ ունենալու համար լաւ
էլ փող է հարկաւոր, իսկ լաւ փող ձեռք բերելու
համար անհրաժեշտ է հասարակութեան, որի թը-
ւումն և պ. Ս. Թառայեանի, առատ նոկիրատու-
թիւնը և ոչ թէ կողելկական ժողովարարութիւն-
ներ:

Գերբանապիլը լաւ ուսուցիչներ չլինելու կարողա-
նութւնն, որովհետեւ նրանք նախ՝ կազմում են մե-
ծամասնութիւնն և երկրորդ՝ ունենն ամենամեծատ-
լայն նիւթական միջոցներ, քան թէ մինչ, հայ բու-
րղորականներս: Գերբանապիլը կարողանում են ի-
րանց գործը անարգել առաջ տանել, որովհետեւ
նրանք, քան թէ մենք, ամենամեծատ շատ քիչ կա-
նում ունենն այդպէս անուամբլած անկախ հանդե-
սանքներով, իսկ թէ ինչ ասել է անկախ հանդե-
սում ասանքն էր, այդ մասին երեւի յայտնի է պ.
Ա). Թառապանքներն: Վաղուց արդէն թէ ուսումնա-
բանի հոգաբարձութիւնը և թէ բոլոր հայ բողո-
քական հասարակութիւնը աշխատում են, ջանքեր
են դնում այդ անկախ հանդամանքներով պատ-
վելու, որպէս զի ոչ միայն ուսումնաբանին, այլ
և բոլոր մեր գործընկեր մի որչա հայակալան ուղ-
ղութիւնն տան, լայն թի էրբ կը կատարվի այդ
ուղղաձանքը, անյայտ է. միայն նրա աջողութիւնը
անպագայում անկասկածելի է:

Երկու խոսքը եւս պ. Հ. Համբարձումեանի մասին: Ձեր թղթակիցը դատում է որ հայ բողոքականները (Երկու տարի առաջ արձակեցին այս ոտատանաուոր մանկավարժին, որ Դվեյցարիայումն էր, աւարտած իր ուսումը եւ որը զգլխով մեր հրապարակներին, չը կամեցաւ մնալ Դայուն) այլին: Ի՞նչ է ժամայցել է մեղանում, «տաղանտ» դառի նշանակութիւնը: Եթէ պ. Համբարձումեանը եւս որդա նմանները տաղանտներ են, ապա ուսման հայերի մէջ տաղանտաւորները թիւը մի քանի միլիոններ է: Պ. Համբարձումեանը ոչ թէ տաղանտաւոր մանկավարժ է, այլ նա մինչևս անուով մանկավարժութեան ամենատարբարակ կամաններն անողով շատ քիչ զխէլ, ըստ որում նա ոչ Դվեյցարիայումն է աւարտել իր ուսումը, եւ ոչ էլ մի որ ե իցէ միջնակարգ դպրոցում, այլ միայն մի քանի տարի չընկով Դվեյցարիայում, գերմաներէն մի փոքր կտորաւոր է սովորել: Երկու տաւոր առաջ հողելու նա հազար տեսակ աշխատանքներով քնտր կարողացաւ՝ ճեշտք բերել այսուկէլ իրենցադիպի միջին դաստանդից մէկլ մկայակարել: Իսկ թէ պ. Ս. Թատայեանը ինչու է նրան տաղանտաւոր մանկավարժ կոչում,—այդ մենք խորով ենք բացատրել միմիայն անձնական հակակրօմեան զղացմունքներով: Ամեն մարդուն երեքլ է իր քերեկամին պաշտպանել, նրա մտքին հողով, բայց ի հարկի, ոչ ի վնաս հատարական շահերին:

Հայ—աւետարանական

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ս. Խաչ-Վանք, յունիսի 12

Որքան հատարակաց խօսք է դարձել թէ ուսու-
նիչը դպրոցին հոգի է և թէ առանց վստիկուէ կեր-
պով պատրաստված ուսուցչի, ամենայն դպրոց ա-
ւանդի վնասակար է քան թէ օգտակար: Իսկ մեր
պոյրի մէջ ուսուցիչներ չով կայ, միանգամայն:

Վեհապետ Վաթիկոսյանը հրամանով գնացել ար-
դատահման և ամբողջ տասն և չորս ամիս աշա-
խատելով Զվիցցիայի, Բելջիկայի, Ֆրանսիայի,
Երմանիայի և Վատրայի հաշվառող վարժա-
րաներում, ուսումնասիրեցի մանկավար-
դականը, որը կարևոր կը համարվի իրենում ոչ
իայն ուսուցչական, մանկավարժական, այլ ա-
մեն մարդին, որը կը կամենա հայր դառնալ:
Հաշվառան է գիշեր, որ քաղաքակրթված և կըր-
թված մանկ դործում զուտին ի վեր պանծացող

Զվլցերլանդի իր երկու և կէս միլիոն ժողովրդով, չը նախելով որ վարժարաններում պակաս չեն մանկավարժ ուսուցիչներ, ունի քսան և ևօթին ասպական և իգական վարժապետանոցներ, որոց մէջ կը պատրաստվին հազար չորս հարիւր քսան երիտասարդներ և երիտասարդուհիներ ուսուցչուհիներ համար: Բնկշլիան նոյնպէս հաշկված է իր հիանալի դպրոցներով և իր հինգ միլիոն ժողովրդով ունի քառասուն վարժապետանոց, (25 արական և 15 իգական), որոնց մէջ կը պատրաստվին երկու հազար հինգ հարիւր երիտասարդ և երիտասարդուհի ուսուցչացուհիներ: Իսկ երեք միլիոն հայերն մեր ամեն տեսակ խառնախիտութիւն դպրոցներով, չունենալով ամեն մէկ մանկավարժօրէն պատրաստված ուսուցիչներ, թող պահպանեն սակաւաթիւ քաջաուսթիւններ, չենք մտածել չենք հոգացել հիմնել զոնէ մի յատուկ վարժապետանոց, ինչպէս օրինակ կան Ռուսիայում—учительскій институтъ и семинарія, Զվիցերիայում, Բնկշլիայում, Ֆրանսիայում—écoles normales, Գերմանիայում—lehrer-seminär և այլն:

Հայ ազգի փրկութիւնը կրթութեանից և դաստիարակութեանից յուսալով, ինձ կը թուի թէ գոնէ այժմով ժամանակը հասած պիտի լինի, որ իւրաքանչիւր մասնող հայն վարժապետանոցի մասին հոլար: Նախախնամութիւնն ինձ վիճակած լինելով առաջին հայկական օրիորդական վարժարանը Տիֆլիսի Երկրորդ Մարիամեան վարժարանները, կը հաճի որ առաջին հայկական վարժապետանոցի Տիֆլիսական թիւան դժուարութիւններն ևս ինձ վիճակին:

Այլ կրկնենք. վարժապետանոցը իր քաղաքին չէր մտածող հայի համար, հայութիւնը լինի թէ չլի, լինի խնդրին չտի նշանակութիւն պիտի ունենայ: Այսպէս մտածելով, Եւրոպայից վերադառնալուցս յետոյ, ես առաջարկեցի քանի մի բարեկամներն միանալ եւ Գիւլիջանի (Սեբասի) լճի մօտ գեղեցիկ հողի վրա հիմնել հայկական առաջին վարժապետանոցը Ռուսիայում: Ձր յաջողութեամբ Անտոնեան սուրբ Սաշ վանքի վանահայր կարգվեցաւ եւ Մարդասիրական ընկերութիւնն եւ առաջարկեց ինձ վանքի զարդոցի վերառեսնութիւն, եւ ահա անցան ութ ամիս: Արդ առանց ժամանակ կորցնելու, որովհետեւ Պեր կեսըրը մեր ձեռքին չէ, կը յայտնեմ ահա, որ ս. Սաշի զարդոցում հիմնելով մանկավարժական բաժանումն, ընդունելու եմ վեց կամ ութ հայազն պատանիներ, քանի մանապէս հայկական զարդոցների համար ուսուցիչներ պատրաստել նոցանից: Նոքա պիտի լինին 16—18 տարեկան, ոչ աւելի, ոչ պակաս: Մարդասիրական ընկերութիւնը նպաստելու է ինձ այս ազգօգուտ գործում եւ աշակերտներին պիտի ընդունեն անվարձ: Ուստի նոքա կը պարտաւորվին պատրաստվել եւ ծառայել այն նպատակի համար, որով կընդունեմ նոցա, անպայման հնազանդելով այն պահանջմունքն եւ կանոններին, որոնք կը սահմանվին առանձին հրահանգով: Այս պիտի քաջ հասկանան թէ իրանք աշակերտներն եւ թէ նոցա ուղարկող ծնողներ կամ խնամակալներ: Նոքա պիտի ունենան ծննդական եւ ծաղիկ վկայականներ, պիտի լինեն առողջակազմ, ընդունակ եւ ձայնաւոր: Նմանք եւ վկայականները պիտի հասցնեն ինձ մինչև օգոստոսի 10-ը:

Թող սա գործ լինի առաջին հայկական վարժապետանոց հիմնելու մեր մեջ,— թէ որքան պիտի մնամ աշտեղ և թէ պիտի կարողանամ արդեօք տեղափոխվել աշակերտանրովս իմ սենյալի Գլխիվանը, այդ ամօրինելու է մեր երկնաւոր Հայրը, որ գիտէ մեր պէտքերն և կարիքներն առաւել քան թէ մենք կը խնդրենք և կը հասկանանք, իսկ մենք մարդասէր Հօր օրհնութիւնը և օգնութիւնը հայրեղով և ամեն ամսանոց և հայրենասէր հայերի համակրութեան քաջալերութեան յուսալով, կը սկսնք մեր ազգօգուտ գործը:

Աշակերտները պիտի ունենան յետագայ տեղեկութիւններ. կրօնից, հին և նոր կտակարանի

պատմութիւն: Հայկական գրաքառ լեզուից, աւետարան հասկանալ, թարգմանել, մեկնել քերականութիւն, հիմնադրապէս խմբաւ խմբարձութիւնը և հոլովմունքը և համաձայնութեան կանոնները: Հայկական աշխարհաբան լեզուից, կարողանալ իր կենսազարգացման գրեթէ մարտնչական օճակը: Ռուսական լեզուից, ուղիղ արտասանութեամբ և առողջամտութեամբ կարողանալ պատմել, գրել թեւադրութիւն, խմբաւ խմբարձութիւնը և հոլովմունքը (Գօլօբոյի քերականութեան առաջին մասը): Ֆրանսական լեզուից, ընթերցանութիւն և թեթեւ խօսքերի թարգմանութիւն, (օրինակ Մարգարիտ Բոսայի քան և հինգ յօդուածներ): Ռուսականութիւն խմբաւ ամբողջութեամբ (Մալինինի և Բուրկինի ձեռնարկ): Պատմութեանց և աշխարհագրական համառօտ տեսութիւն, հին դարի համառօտ պատմութիւն: Աշխարհի հինգ մասերի համառօտ տեսութիւն (Կլոպսկու պատմութեան համառօտ ձեռնարկ և Կոնսէյի աշխարհագրութեան ձեռնարկ):

Մանկավարժական ուսումն շարունակվելու է երկու կամ երեք տարի, նայելով հանգամանքին: Խնդիրն և վկայականներն ուղարկելու է այս հասցեով. Нахичевань на Дону. Архимандриту Хорену Степане, գրելով խնդիր մէջ իրանց հասցէներ, որով յետոյ ևս խմբանկու եւ նոյա թէ մրտեղ և երբ կարող են ընկնել վերալինելու պարգրամով:

Խոնարհաբար կը խնդրեմ բոլոր հայ լրագիրներէից արտասովել բարեհաճել այս իմ նամակս:

Խորէն վարդապետ Ստեփանէ

ՆԱՍՏԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ախալքալար, 5 յունիսի

Խնդրում ենք մեր այս երկտող նամակին մի անկիւն շնորհք պատուական «Մշակի» համարներէ մինում:

Ահա երրորդ ամբիւն է, որ Ախալքալարի երկսեռ ուսումնարանները մեր հոգաբարձական կառավարութեան տակ են: Տղայոց Ս. Մեսրոպեան ուսումնարանի շինութիւնը սատարի խարսխող դրութեան մէջ լինելով, այս երեք տարեկան ընթացքում թէ մեր միջոցով, թէ տեղւոյն հայր գործակատարի և թէ քաղաքի պ. դեպուտատի շնորհով մի քանի հասարակական ժողովներ արկնք, որ հասարակութիւնը միջոցներ գտնի ուսումնարանի շինութիւնը նորոգելու, բայց յարգել հասարակութիւնը անտարբեր մնաց մեր առաքարկութեան:

Մենք մեր յոյսը դրինք ուսումնարանների մօտ 3,000 ռուբլի ունեցած ապառիկների և այն մի բանի պարանները վրա, որոնց իւրաքանչիւրը յայտնի ժամանակներում խոստացել են մի մի նշանաւոր գումար, որոց մի երկուսի նուիրելու—փողի տոկոսով պէտք է սաներ պահվեն մեր երկսեռ ուսումնարաններում: Մենք պաշտօնական թղթով պահանջում ենք խնդրեցինք այդ պարաններից, որ այդ խոստացած գումարները մեզ նաղը փողով տան, որ այդ փողերով սկսեցինք պատասխան տուել, միւսից մինչև հիմա տեղեկութիւն չունենք, իսկ մի քանիսն են ևս բոլորովին հրաժարվում են խոստացած նուէրները տալուց: Ապառիկներից ոչ մի կօպէկ յոյս չը կայ ստանալու. մի և նոյն ժամանակ մեր հասարակութիւնը այնքան սառն է վերաբերվում դէպի իր ազգային ուսումնարանները, որ իւրաքանչիւր տարի 200—300 ռուբլի ապառիկ է մնում աշակերտների թոշակադրամից, պատճառ բերելով թէ ազգային հիմնարկութիւն է, պէտք է ամեն բան ձրի լինի:

Ուրեմն ուսումնարանի նորոգութեան յոյսը բոլորովին ապարդիւն է դուրս գալի:

Թեւ. վեր. պ. Բարխուդարեանցի և տեղւոյն պ. Գաւառապետի կարգադրութեամբ պէտք է փակվել խարսխող ուսումնարանը, բայց մենք նորանցից խնդրել ենք մի քանի ամիս ժամանակամիջոց, յոյս ունենալով թէ կարող ենք այս ամառ նորոգել, բայց մեր յոյսերը և նպատակները բոլորովին ապարդիւն մնացին:

Այդ պատճառաւ յայտնում ենք Ախալքալարի պատուելի հայ հասարակութեան, որ սորանից ետ եթէ փակվեն ուսումնարանները, մենք պատասխանատուութիւնից մեզ ազատ ենք համարում:

Հոգաբարձուներ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բէլի-Կլոնից մեզ գրում են: «Մարտի 21-ին կէս օրից յետոյ ժամի 4-ին Կաղէթ գիւղում սարսափելի մեծութեամբ կարկուտ եկաւ: Խեղճ դիւղացիների ամբողջ տարվայ աշխատանքը կէս ժամից մէջ փչացաւ: Կաղէթ գիւղը որ սովորաբար թիֆլիսի ալիւր էր մատակարարում, այս տարի ինքն ստիպված կը լինի ուրիշ տեղից հաց ստանալ: Արտերին կարկուտի պատճառով մեծաւոր հանում է 80,000 ռուբլ գումարի: Կարկուտից մնացածներն և մի քանի անտուճները:»

Մեզ գրում են ԱՂՎԱՇԻՑ հետեւալը: «Յունիսի 2-ին կէսօրից յետոյ ժամի 4-ին սաստիկ կարկուտ եկաւ այստեղ և չըջականեց: Կարկուտը տեղի մի ամբողջ ժամ: Բոլոր ցորենները մնաց զրկվեցան իրանց տերներէից, այնպէս որ գաւառիս դէպի Ղաբալի կողմերը, ինչպէս ասում են, չատ թուշունք ու նապատակներ անգամ կոտորվեցան կարկուտի հարուածներից:»

Նոյն տեղից մեզ գրում են: «Նոյսուց այս գարնանը բերել էին այստեղ ֆրանսիացի պ. Լէրիսի պատրաստած շերամի օւլիւն էր անուանված սերմը: Վաճառում էին ֆունտը 10—12 ռուբլով: Բայց գործադարար սերմերի չատ մասը չաջողվեցաւ, իսկ դուրս եկած որթերը երկար չապրեցին. նրանք երկու շաբաթվայ միջոցում կոտորվեցան:»

Յայտնում ենք հայոց հասարակութեանը որ յուրիս ամիսը մօտենալով, ցանկացողները կարող են արդէն «Մշակին» կէս տարով գրվել: Մեր լրագրի կէս տարվայ բաժանորդացինը 6 ռուբլ է:

Մեզ խնդրում են տպել հետեւալը: «Ներսիսեան դպրոցի բարձր դասատան աշակերտներից մինը կամենում է դասեր տալ չափաւոր գնով: Կարող է պատրաստել մանուկներին հայոց ուսումնարանների պատրաստական և առաջին դասատուների համար բոլոր առարկաներից: Աշակերտներ կարող են երկու սեռի լինել: Ցանկացողները կարող են իրանց հասցէն թողնել «Մշակին» խմբագրատան մէջ:»

Պ. Պաշտանց, որ Երևանի և Կարսի թեմերի հայոց ազգային հոգևոր դպրոցների թեմական վերատեսչի պաշտօնակատարն է, խնդրում է մեզ տպել հետեւալը: «Խնդրեմ Երևանի և Կարսի թեմերի հայոց հոգևոր և ծխական դպրոցների հոգաբարձութիւններին առաջիկայ սեպտեմբերից ուսուցիչների կարիք ունեցած ժամանակ դիմել ինձ, յայտնելով մանրամասնաբար աւանդելի առարկաների, դասերի թիւ և ուսնիկների քանակութեան մասին: Խնդրեմ, նոյնպէս, յիշեալ թեմի հայ հոգևոր և ծխական դպրոցներում ուսուցչական պաշտօն ընդունելու ցանկացողներին որ առաջ յայտնել ինձ իրանց պայմանները:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Պարլամենտական անցքերը, որոնք պատահեցան անցեալ շաբաթ Բերլինի մէջ, այնպիսի մեծ ապաւորութիւն գործեցին Գերմանիայի վրա, որ դեռ երկար ժամանակ նրանք հասարակութեան խօսակցութիւնների և մամուլի գտողութիւնների առարկայ կը լինեն, գրում է «ԴՅՈՅ»:

Երբէք իշխան Բիսմարկի այդպիսի պարտութեան չէ ենթարկվել երբէք նրա ներքին քաղաքականութիւնը հասարակական կարծիքին այդքան համեմատ չէ քննվել: Ի՞նչ կանի այժմ «երկաթե կանցլերը» իր քաղաքական և տնտեսական ձգտումները յաղթող հանդիսանալու համար: Ինչպէս կը կառավարի նա երկիրը, քանի որ ժողովրդի ներկայացուցիչները նրան չեն պաշտպանում:

Այդ հարցերով զբաղված են Գերմանիայի քաղաքական շրջանները և հասարակական կարծիքը: Գերմանական պետա-

կան կանցլերը այնպիսի մարդկերանցից է, որոնք հետուութեամբ ենթարկվում են հասարակութեան ցանկութեանը, և այժմ նա բոլորովին չէ կամենում պարլամենտի ազատամեծամասնութեան հետ համաձայնութեամբ գործել: Իր ճառերի մէջ իշխան Բիսմարկի այնքան արհամարհանք յայտնեց պարլամենտական պահանջներին և այնքան հակասահամադրական ձեռք խօսեց, որ անկարելի է յուսալ թէ նա կենթարկվի հասարակութեան կամքին: Ուրեմն նա կը շարունակէ մաքառել, թէպէտ զրա համար նա այլ ևս չունի պարլամենտական միջոցներ: Այդ մաքառումն կը շարունակեն և նրա հակառակորդները, ազատամիտները, մանաւանդ առաջադէմները, որոնք այժմ առաջնորդում են ընդդիմադրական կուսակցութեանը: Թէ որքան մեծ կշիռ ունի ազատամիտների վճիռը պաշտպանել իրանց սկզբունքները, երևում է ազգային—ազատամիտ կուսակցութեան նշանաւոր ներկայացուցիչ Բիկկերտի յայտնութեանց, թէ նրա բարեկամները չեն հանդատանայ, մինչև ապագան չի պատկանի ազատամիտ կուսակցութեանը, որի անդամներն են ժամանակ Գերմանիան առանց Բիսմարկի էլ կարող է կառավարվել:

Կայսերական պարլամենտը արձակուրդ է ստացել մինչև նոյեմբերի 30-ը: Ուրեմն գերմանական կանցլերը բաւական ժամանակ ունի մտածելու, թէ արդեօք պէտք է արձակել այժմեան պարլամենտը և նոր ընտրութիւններ նշանակել, թէ պէտք է համբերութեամբ սպասել, որ ժողովրդի նոյն ներկայացուցիչները դարձեալ մի անբաւականութիւն ունենան Բիսմարկի հետ: Ոչ դրէ հաւատում, որ իշխան Բիսմարկի նկատի ունենալով հասարակութեան այժմեան արամադրութիւնը, յոյս դնէր նոր ընտրութիւնների վրա, մանաւանդ որ աշունքին լինելու են պրուսական սեյմի անգամների ընտրութիւնները, որոնց վերջը ցոյց կը տայ, թէ կառավարութեան քաղաքականութեանը ազդեանքութիւնը մինչև որ աստիճան համակրում է: Եթէ այդ քաղաքականութիւնը կը պահարկվի նոյն իսկ Պրուսիայի մէջ, ուրեմն Բիսմարկի ինչ բանի կարող է սպասել մնացած Գերմանիայի ազդեանքակութիւնից:

Այսպէս թէ այնպէս, պետական կանցլերի և գերմանական պարլամենտի մեծամասնութեան մէջ եղած թշնամութիւնը սաստիկ ճնշումն է գործում Գերմանիայի ներքին քաղաքականութեան դրութեան վրա: Պարլամենտական պարագմունքների վերջին շրջանը, որ սկսվեցաւ տարիի 27-ին և վերջացաւ յունիսի 16-ին, օրհնագրական տեսակետից անպտուղ է համարվում: Կառավարութիւնը չը կարողացաւ համաձայնութիւն կայացնել պարլամենտի հետ ոչ մի նշանաւոր խնդրի վերաբերութեամբ և նրա առաջարկած նշանաւոր բոլոր օրինագիծները մերժվեցան պարլամենտից կամ յետաձգվեցան: Հասկանալի է, որ գործերը այդպէս չեն կարող շարունակվել և անհրաժեշտ է, որ կամ ժողովրդի ներկայացուցիչները փոխվին կամ կառավարութիւնը:

Գերմանական պարլամենտի պարագմունքների վերջացած շրջանի զխաւոր նշանակութիւնն այն է, որ նա երևան բերեց այդ փոփոխութեան անհրաժեշտութիւնը: Զիջու մին պէտք է անէ այն կողմը, որ աւելի թոյլ է, յաղթված է և որ անկարող է յենվել որ և է նշանաւոր պարլամենտական կուսակցութեան վրա: Թէպէտ իշխան Բիսմարկի նրան շատ է հաւատում, թէպէտ նա մեծ զգուշանք է զգում դէպի ազատամիտ

սկզբունքները, որոնք Եւրոպայի մէջ ամեն տեղ յաղթող են հանդիսացել և մեր ժամանակների սկզբունքներ են դարձել, այնուամենայնիւ նա երկու ելքից մէկը պէտք է ընտրէ, կամ հպատակվի ժողովրդի կամքին, որի հետ համաձայնութեամբ գործելով նա առաջիկայ պէս հրաշքներ կարող է գործել, կամ հրաժարվել դոնէ ներքին գործերի կառավարութեանց: Յայտնի է, թէ ինչ կանի իշխան Բիսմարկի, բայց Գերմանիայի քաղաքական զարգացումը այնքան առաջ է գնացել վերջին տարիներում, որ ազատամեծութեան կուրը յետադիմութեան հետ միայն մի ելք կարող է ունենալ, դա առաջինի յաղթութիւնն է:

ԵՊԻՊՏՈՍ

«Times» լրագրի թղթակիցը գրում է Ալեքսանդրիայից յունիսի 15-ից հետեւալը: Այստեղ ամեն բան—առաջիկայ դրութեան մէջ է: Մենք փոքր առ փոքր ընտելանում ենք մեր պաշարված դրութեան հետ և միթմարվում ենք, նայելով այդ դրութեան ծաղրալի կողմերի վրա: Խանութների կողպուները յարձակմունքի են ենթարկվում իրանց հայրենակիցների կողմից, որոնք աջողութիւն չեն ունեցել, և շատ անգամ թողնում են կողպած աւարը: Որովհետեւ եւրօպայի փախստականները մեծ քանակութեամբ ապաստանվել են նաւերի վրա, նրանք գրեթէ նոյն վտանգի են ենթարկվում, ինչ որ քաղաքում մնացած եւրօպացիները: Երէկ, կէսօրից յետոյ, մօտաւորապէս ժամի 2-ին այստեղ դարձեալ սարսափ տիրեց: Կրան առիթ տուեց երկու արաբների կուրը, որ ոչինչ վատ հետեւանք չուներցաւ: Այնու ամենայնիւ եւրօպական թաղի մէջ ամենքը շփոթված էին: Բոլոր խանութները և փողոցի տները մի րօպէսում փակվեցան: Տեղացիները նոյնպէս վախեցան և «յոյներ են գալիս» աղաղակներով թափվեցան նեղ փողոցները, իսկ մի քանի տեղ մինչև անգամ ծովը նետվեցան: Միայն երկու ժամից յետոյ կարելի եղաւ հանգստութիւնը վերականգնել: Զինուորները, որոնք ստիպված են միշտ պատրաստ լինել բարոյապէս և ֆիզիկապէս չարչարված են: Վերջին երկու օրերի ընթացքում, մի քանի բացառութիւններով, զինուորները իրանց շատ բաւ էին պահում, բայց ակնհայտ է, որ նրանք չեն համակրում եւրօպացիներին: Ուրեմն միայն եզրիպտական զօրքերի վրա յոյս դնելը վտանգաւոր է: Տեղական ազդեանքակութեան փոքր ի շատե լուսաւորված մասը եւրօպացիների չափ վախեցած է և ինչպէս է, որ կամ զինուորական միջամտութիւն գործվի, կամ դրական միջոցներ գործադրվեն այժմեան անբնական դրութեանց դուրս գալու համար: Իւրաքանչիւր ժամ այնպիսի անկարգութիւններ կարող է ծագեցնել, որից յետոյ զինուորված միջամտութիւնը աւելի էլ զգուշ կը լինի: Նորեքում Գերվիշ-փաշա պատերազմական միջնադարի օգնական եաւուր-փաշայի ուղեկցութեամբ շրջեց քաղաքի մէջ: Նոյնը արաւ և խեղիվը: Ես նրան հետեւում էի և հսկում էի, թէ ժողովուրդը քաղաքի զանազան մասերում նրան ինչպէս կը դուրսնի: Տեղ տեղ նրան յարգանքով էին ընդունում: Իսկ մի քանի տեղ նրա ներկայութեամբ ամբողջ ծաղրում էր եւրօպացիներին: Բայց ակնհայտ վերաւորաբար խեղիվը ոչ մի տեղ չենթարկվեցաւ:

ՆԱԽԱԿ ԹԻՐԻՔԻԱՅԻՑ

Տրապիզոն, 3 յունիսի 82

Անշուշտ թէ զորքն ի թէ «Մշակ» ընթերցողք կը սպասէք լուրերու Տրապիզոնէն որ իւր դիրքով ամբողջ Հայաստանի, նաւահանգիստը կրնայ համարուի: Ուրիմն տանք քանի մը լուրեր: Ամեն ճամբորդը որոնք Տաճկա-Հայաստան կերթան և Հայաստանէն կուգան, ընդհանրապէս Տրապիզոնէն կանցնեն:

Տրապիզոնէն իրերեւում տանող ճանապարհի վրայ դժուար չէ տեսնել լարեկարգիչ թիւրքեր իրենց հետ ունենալով հայ էֆէնդիներ, ձի խաղացնելով կերթան Հայաստան աշխարհը բարբառաց ձեռքէն ազատելու մինչ իրենք են բարբառաց:

Գժրադուրեանք մի քանի անգամ Տրապիզոն հիւրընկալու եղաւ այս տեսակ բարեկարգիչներու Տրապիզոն և հինգ օր առաջ խաւք մը բարեկարգիչներ կրկին անցան առաջնորդութեամբ մի թիւրքի, որ նշանաւոր է Արեւելի Ռուսիայի մէջ զործած անդիմադրելիներով: Երանի անոնց որոնք դեռ յոյս ունին այս տեսակ մարդեր:

Տրապիզոնէն իրերեւում տանող ճամբուն վրայ նոյնպէս դժուար չէ տեսնել Լոյսլայի վիժածները որոնք արեւմտեան յոյսերին կարծած, որսեր-ինքն անկողնի անկողնի մէջ կը փնտռեն, խօսքս ճիւղիլներուն վրայ է: Ամեն չարախ զը-րեթէ ապականիչ մորեխներու նման կը դիմեն դէպի երկրի խորքերը, ճշմարիտ մորեխներու կը նմանին թէ ճանդերծով և թէ կերպարանքով:

Երայա աշխարհուն մէջ նայողը կը տարտախիլ տեսնալով կատաղութիւն մը և անդիմադրելի մը և կը կարծէ թէ սոքա աւերակ պիտի դարձնեն այն ամեն տեղերը որք նոցա քաղաքուն կոխան պիտի լինին, և դարձուանքով կանխէ զանոնք:

Բայց միթէ իրաւունք ունիք անիծելու, իմ խելքով ոչ երբեք, եւ կանխեմ զիս որ չեմ կարող արդիւք լինել նոցա ազգակործան հեղեղին դէպի Հայաստան, և կանխեմ զմի որ չեմ կարող միջոցներ ձեռք առնուլ ապարդիւն ճանաչու-նոցա բոլոր ջանքերը, որ չեմք ուզեր աշխատել հայ ժողովուրդը կարօտ չընել օտարին և աղա-տել զանազն օտարին ապականիչ ձեռքեր:

Եթէ պոլսեցի մը (նոստ) մը կարողաւ լինի յօդուածս արձամարձական ծիծաղով մը պիտի ար-տասանէ «հայ կղերներու կազմած ընկերութեան տեղեկութիւն չունի»: Դա, հա, ոչ միայն տեղե-կութիւն ունի նոցա ներկայ վիճակէն, ընկերու-թեան կազմակերպութեան, այլ և նոցա ապագայ գործունէութեան: Ամենահաստատ կերպով կը հաւատամ որ վտանգաւոր առիթ կը լինին հայ ժողովրդին ճիւղիլեաց և միաօնարաց գրկել գիտնելու: Իմ կարծիքով հայ կղերականը ա-մեն կերպով անկարող է և անպարտ է հայ ժո-ղովուրդին գոյութիւնը ապահովել ճիւղիլեաց և միաօնարաց մեղենաշուկանց դէմ: Այդ պաշտո-նը հայ ուսուցչին է: Եւ միայն կարող է հայ ժողովրդին դաւանանքը դարման լինել: Թէ քաղա-քակրթեալ և թէ վայրենի թշնամեաց դէմ դիմա-դրելու համար վարժապետ պէտք է, իւր պարտքը և պաշտօնը ճանաչող վարժապետ:

Կղերական միութեան յոյսերնիս կարելու ենք, և մեր յոյսը վարժապետաց վրայ դնելու ենք: Գրելու նիւթեր չատ կան, բայց երկայն գրել չուզելուս համար գալ չարախ նորէն գրելու խոտ-մամբ կը վերջանան նամակս յայտնելով պ. Յա-րայի և պ. Թովմատեանին Տրապիզոն գալով և Պօլսի մեկնելին:

Թող երթան. տեսնենք հայութեան ան ապա-կանաւ կենցաղին մէջ ինչ կը գտնան:

ներքին մեծ թիւ, օրինակ Սուլթան փաշա, յուսա-հատով ևն ապագայի ճամար:

«Standard» լրագրին Ալեքսանդրիայից հե-ռագրում են, որ մայիսի 30-ի անցքերի պատճա-ռով յանձնաժողով կազմակցաւ դատաստանական ընտելութիւն անկու համար և արդէն առաջին նիստ ունէր: Այդ յանձնաժողովը, որ Ալեքսան-դրիայի հանանգապետ Օմար-Լուֆտի փաշայի նա-խագահութեան տակ է, իր անդամներ թուով հաշուում է արդարադատութեան և դիւտարական միջնորդութիւնների բաժինների քարտուղարներին և Գէլլի-Փաշայի ու խելիլի ապիստաններին: Օտարազգի հիւպատոսարանների պատգամաւոր-ները նոյնպէս հրաւիրված են ներկայ գտնուիլ յանձնաժողովի նիստերին:

«Voltaire» լրագրի ստացած տեղեկութիւն-ները համեմատ, հինգշաբթի, յունիսի 3-ին, մի-նիստերի խորհրդից յետոյ, Ֆրէյսին չատ նշա-նաւոր հեռագիրներ ստացաւ: Եւ անյապաղ իր մօտ հրաւիրեց իր ընկերներին, և միմիտական նոր խորհուրդ կազմաւ: Ֆրէյսին չատցած հե-ռագիրներէր յայտնեցաւ, որ Գերմանիան, Աւ-ստրիան և Խաղախ միմեանց մէջ համաձայնու-ցան հետեւեալ կէտերով: 1) Թիւրքիան կը մատ-նացիլ կոնֆէրենցիայում: 2) Եթէ Գերմանիան զանկէց անի Տէլֆիկին, Թիւրքիան կատարեալ իրաւունք կունենայ նրա յաջորդը ընտրել, և երեք-մեծ պետութիւնները պարտաւորուում են չը բողո-քել այդ ընտրութեան դէմ: 3) Եթէ միջամտու-թիւն կը հարկաւորվի, այն ժամանակ միայն Թիւրքաց զօրքերը կը կանչվին միջամտութեան համար: 4) Եթէ Գերմանիան միմիտ յաջողու-թիւն կունենայ, սուլթանը անյապաղ կը պահան-ջի, որ անգլո-ֆրանսիական զորհանկիր նաւերը յետ կանչվին և երեք մեծ պետութիւնները պար-տաւորուում են պաշտպանել այդ առաջարկու-թիւնը: Այդ հեռագիրները ընտաղապետի համար պէտք է միւս օրը միմիտարկան նոր խորհուրդ կազմելու: «Voltaire» լրագրի հաւատարմաց է, որ եթէ կոնֆէրենցիան կը կազմայ, այդ միայն զօ-րքերի թիւը որոշելու համար կը լինի, որ պէտք է Թիւրքիան ուղարկի Նիդրառն, եւրոպական կոն-տրոլի տակ այդ պետութեան գործողութեան եղանակը որոշելու համար:

«L'orient» լրագրի նիւթերով, յունիսի 3-ին Կիւպլիօրում, Կալան կամուրթեան մէջ, կարճատեւութեամբ է Պատրիկ Մարտին անունով մի-կը, որ կատարվում է Ֆինիկ-պարիկ յանցանքի մէջ մասնակցելու: Եւ Գիւբլին ուղարկվեցաւ:

«Pall-Mall-Gazette» լրագրի յայտնում է, որ Գալլէ կամութեան մէջ չորս անձիք են կա-րճատուրված, որոնք կատարվում են այն բանի մէջ, որ նրանք կարեւորապէս Բուրիկ և դրագուն Վալլանի սպանդանի ձեռ յարգերութիւններն ունեն: Կաթոլիկ եպիսկոպոսը Էլֆինում, զօկտօր Գիլուֆ, վալտեր Բուրիկ մօտիկ ազգականը, հրամայեց իր թիւմի քահանաներին, որ նրանք համոզեն իրանց ծխականներին տալ իշխանու-թեանը ամեն տեսակ տեղեկութիւններ, որոնք կարող են մարդասպաններին հետքերը գտնելու նպաստել:

«Central News» լրագրում ասված մէկ հե-ռագրի խօսքերով, Սկիթերին չըջականութեամբ, բա-րեգործական ընկերութեան մէջ անդամի ընտրու-թեան պատճառով, կատարվել է հողային յան-ցանքների մի շարք: Մայիսի 28-ին, առաւօտեան, դիմված և դիմակաւորված անձինքների մի խումբ այցելեց ընտրողների շատերին և ստիպում էր նրանց ընտրողական թիւքերի վրա գրել իրանց թիւքերը անունները: Եթէ մերժում էին, այն ժամանակ հրաշքներ էին արձակում աների պա-տուհաններում: Պօլսիցի դատաստանական քն-նութիւն սկսեց այդ յանցանքների առիթով: Հո-ղային լիգայի բազմաթիւ անդամներ, որոնք նա-սայեան բանտում բանտարկված էին, որպէս կա-պաւորվածներ, մայիսի 27-ին արձակվեցան:

«L'orient» լրագրի նիւթերին հաղորդում են յու-նիսի 18-ին, որ այնտեղ սպասում են սուլթանի քարտուղար Օսման-բէին, որը առանձին յանձ-նարարութեամբ Ալեքսանդրիա էր գնացել: Եւ որ տարածվել, որ նա իր հետ բերում է խելիլի նա-մակը, որի մէջ այդ վերջինը չորհրդակալութիւն է յայտնում սուլթանին Գէլլի-Փաշայի ուղարկե-լու համար, և մի և նոյն ժամանակ խելիլում է սուլթանից պաշտպանութիւն:

«L'orient» լրագրին Ալեքսանդրիա-յից հեռագրում են, յունիսի 18-ին, որ խելիլը հակառակորդ օրը հաստատուում էր անուանիների ժողովի նախագահին, որ նոր միմիտութեան

կազմակերպութիւնից յետ խելիլին ինքն կալիւրէ կը վերադառնայ: Բոլոր փաստաւորները Ալեքսանդ-րիայում նորից բացվեցան: Բանտարկված ապս-տամբները, նրանց բաղնիքեան պատճառով, մէկ զօրանոց են տեղափոխված:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ուսումնարանի անկան պարգևն էր Միկ-սիկայում: Ամենալաւ և ամենապատուաւոր ընծան աշխատանքը աշակերտի համար Միկսիկայում ծխելու թոյլտուութիւնն է դատարանի մէջ: Եւ հատկանշի է, որ չորս տարեկան հասակից ան-դադար ծխելու սովոր պատանու համար դատա-րանի մէջ մի քանի ժամկէտ ընթացում չը ծխե-լը չատ ծանր պատիժ է, և յաճախ ամենածուր-աշակերտը, նայելով թէ ինչպէս իր հարեանը ա-խորժակով ծխում է, ինքն էլ վերցնում է գիրքը և աշխատում է նոյն իրաւունքն ստանալ: Երե-մէն ուսուցիչը, բաւական լինելով իր դատաւո-նից, բոլոր աշակերտներին թոյլ է տալիս ծխել, և այդ թուկին դատաւունքը բաւական օտարադ-տեսարան է ներկայացնում: Ամենալաւ աշակեր-տին երբեմն թոյլ է տրվում, որպէս նշան ուսուց-չի առանձին շնորհի, քիչ խմել «վիսկի» խմիչքը, որ աշակերտների ծնողները ուղարկում են վար-ժապետներին և որ միւս դրված է լինում վաղ-ժապետական ամբիճնի վրա: Ուսուցիչները իրանց աշակերտների յառաջգիւղութեան մասին միմեանց հարց ու փորձ անելու ժամանակ, հարցնում են միայն, «նոցան հողի ծխում են ձեր դատարանը»: Առհասարակ, ծխելը Միկսիկայում այնպէս տա-րածված է, որ մինչև անգամ դատարանի դահլի-ճը բերված յանցաւորը իրաւունք ունի ծխել մի-չև դատաւիչի կողմից: Բանտերի մէջ ամենա-ծանր պատիժ համարվում է ծխել արգելելը, և բանտարկեալները աւելի լաւ են համարու-մարմնական պատիժ կրել քան թէ չը ծխել:

Կենդանի մարդկանց թագուած: Մի լրագրի հաղորդում է հետեւեալ փաստը: Հնդկա-ստանում դեռ են պահպանվել են ծխելը, որոնք ցոյց են տալիս նախկին ժամանակների բարքերի կոպտութիւնը: Այդպիսի սովորութիւններից մէկը, այդպէս անուանված սամալն է, այսինքն կենդա-նի մարդկանց թաղումը, որ մինչև այժմ էլ պահպանվում է Բիկանիր նահանգում, որպէս ցոյց է տալի մէկ դէպք, որ նորեւրումս պատահեցաւ նահանգի գլխաւոր քաղաքից 60 վերստ հեռաւ-րութեան վրա գտնվող Ուպիլի գիւղում: Այդ գիւ-ղը ուղարկվեցաւ մէկ տակուր, այսինքն հարկա-հան: Տեղական բնակիչները հրաժարվեցան հա-րկել վճարելու: Տակուրին վախեցնելու համար, 150 մարդիկ ժողովեցան նրա տան առաջ և յայտնեցին, որ իրանց կը սպանեն, եթէ նա դատարկ ձեռքերով չի հեռանայ այնտե-ղից: Բայց որովհետեւ տակուրը հաստատ էր իր խօսքի վրա, այդ պատճառով տեղական բնա-կիչները ընտրեցին իրանց միջից մի 75 տարե-կան տղամարդ և 65 տարեկան մի կին և գերեզ-ման փորելով, թաղեցին նրանց տակուրի աչքի առաջ: Այդ անգամ այդպիսի բարբարոսութիւնը անպատիժ չանցաւ. քան և ինչ տեղացիներ բան-տարկվեցան, իսկ նրանցից տասն և ութը ծանր պատիժների դատապարտվեցան:

Թագուած հանդէս: Հիւսիսային Ամերիկայի Նիւ-Ջերսի նահանգի Բոչլեստեր գլխաւոր քաղա-քում այս օրերը մէկ առեւտրահանգիստ է բաց-ված, որ բացառապէս նորիւրված է թաղման ար-դիւնարեութեանը: Արեւմտահանգիստը մէկ շա-բաթ կը շարունակվի: Այնտեղ ժողովված են զմտելու ամեն եղանակները, գերեզման փորող-ների գործիքներ, դաղաղներ, պատաններ, թաղ-ման կառքեր, սղի շորեր, մահաւան լուրը յայտ-նող նամակներ, պապիներ, տապանաքարեր, մի խօսքով, ամեն բան, ինչ որ կապ ունի թաղման հետ: Միայն մի բան է պակաս, թաղման երաժշ-տութիւնը, որ այդ օտարադի նահանգ կազմողները կարծես մոռացել են:

Անգլիական գաւառական բնի վրա նորեւրումս տրվում էր սպասախնդրով լի միկ դրամա: Վեր-ջին տեսարաններից մէկի մէջ դուրս է գալիս մէկ չարագործ, որը պէտք է խնջարով սպանել իր հակառակորդին: Մօտենալով իր գոհին, դե-րասանը նկատում է, որ խնջարը մոռացել է

բեմի ետեւ գտնվող սենեակում: Այդպիսի կրիտի-կական բացման, դերասանը մէկ անտուր հա-րադիտութիւն ցոյց տուեց: Ամենին չը շփոթ-վելով, նա յարձակվում է իր հակառակորդի վրա և արտաքին արագութեամբ զոհուի: Միայն, երկուս-ն և մօտս խնջար չունեն, բայց ահա երկու զօ-րեղ ձեռքեր, որոնցով եւ տեղի ու տեղը կը խեղդիմ քեղ պատուի: Կատարակութեան աչքի առաջ: Պատուի հասարակութիւնը ստատիկ ծա-փարակեց հնարաղէտ դերասանին:

Ճարպիկ գործ: «Саратовский Листок» լրագրի հաղորդում է հետեւեալ կատարեալ ամե-րիկական հնարագիտութեան մասին: Յարիցիւնում հիւանդացաւ Կարանով անունով մէկը, հիւանդու-թիւնը երկար էր շարունակվում և, ինչպէս ե-րևում էր, Կարանով ծանր հիւանդ էր: Հիւանդին այցելելու համար, մի անգամ մտաւ նրա մօտ նրա հարուստ քեռին: Փարպիկ աղգախնի կողմից այդպիսի ուշադրութիւնը արտասուելու չափ չար-ժեց Կարանովի սիրտը և նա ի նշան երանապա-տիւնեան թախանձելով ինդրեց իր քեռան որպէս յիշատակ, վերջին իր դատարկված կրկա-թեայ դրամարկը (касса): Քեռին սկզբից չէր համաձայնվում, բայց յետոյ զիջողութիւն արաւ մեծանորի ցանկութեանը, և Կարանովի դատարկ դրամարկը տեղափոխվեցաւ քեռու առանձնա-սենեակը և այնտեղ լցվեցաւ զանազան թղթա-դրամներով: Գրանից մի փքը ժամանակ անցած, քեռին տօնավաճառ գնաց, իսկ Կարանով սկսեց առողջանալ և մինչև անգամ թիւթի դրօշմանը անել: Այդ դրօշմաններից մէկը ժամանակ, հենց քեռու դռների մօտ, Կարանով, որպէս դեռ թոյլ մարդ, յանկարծ ուշաթափվեցաւ և ընկաւ: Ան-ցորդները հաղորդեցին այդ բանի մասին քեռու ընտանիքին. քեռու տանից դուրս վազեցին հի-ւանդի մօտ նրա մօրաքոյրը և աղախինը, որոնք միմեանք էին տանը խելիլ տեղափոխեցին հի-ւանդին քեռու առանձնապահեակը, խնամքով պառկեցրին նրան անկողնում, և ապա իրանք գնացին—մէկը բժշկի ետեղի, իսկ միւսը Կարա-նովի ընտանիքի մօտ: Վերջապէս, վերջինի ըն-տանիքը և բժիշկը եկան. բժիշկը հարկաւոր օգ-նութիւն տուեց, իսկ հիւանդի ընտանիքը տեղա-փոխեց նրան իր բնակարանը: Քեռին, տօնավա-ճառից վերադառնալուց յետոյ, մեծ զարմանքով տեսաւ, որ իր կատարեալ, չը նայելով որ դադո-նի կողպէքները կտրված էին, բաւական խո-չոր դոմար պակաս էր: Բայց, երբ քեռին իմա-ցաւ իր աղգախնի ուշաթափութեան պատճառ-թիւնը, նրա զարմանքը փախաւ. նա հասկացաւ, որ սիրելի աղգախնի իր ընտանք կատարել մէկ ուրիշ բանալի պահել է իր մօտ, որը և պէտք է կաւ նրան: Քեռին չը համբերեց և իր կողպեւած կատապից հարաւի կերպով անհետացած փողերի մասին պատմեց իր բարեկամներին, որի պատ-ճառով աղգախնի դատի կանչեց նրան յարա-սանքի համար, և հաշտվելու համար նրանից դեռ 2,000 ռուբլ էլի վերցրեց:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՈՒԹԻՑ, 16 յունիսի: „Правит. Вѣстн.“ լրագրի հաղորդում է, Գոտով-ցիկ իր խելիքի համեմատ հիւանդութեան պատճառով արձակված է միմիտը օգնա-կանի պաշտօնից, մնալով սենատոր:

Ս. ՊԵՏԵՐՈՒԹԻՑ, 15 յունիսի: Պետական բանկի 5% տոմսերը առաջին շրջանի արժէ 93 ռ. 50 1/2 կ., երկրորդ 90 ռ. 50 կ., եր-րորդ 90 ռ. 37 1/2 կ., չորրորդ 90 ռ. 25 1/2 կ., հինգերորդ 90 ռ. 50 կ., ներքին 5% առա-ջին փոխառութեան տոմսերը արժէ 217 ռ., երկրորդ 209 ռ. 75 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսերը արժէ 89 ռ. 50 կ., երկրորդ 89 ռ. 50 կ., երրորդ 89 ռ., ոսկի 8 ռ. 24 կ.: Բուսաց 1 ռ. Լոնդոնի վրա արժէ 24,9 պէնս, ուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 205 մարկ 75 պֆ., Փարիզի վրա արժէ 252 ֆրանկ 50 սան-տիմ: Բօրսայի տրամադրութիւնը թոյլ է:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

